ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-22/1»-2

ք. Վանաձոր «28» դեկտեմբերի 2021թ.

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Մ. Ա. Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի-Ֆարմ դեղատուն>> ՍՊԸ-ն , ի դեմս տնօրեն Ա. Աստրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ____ օրից ավելի*։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը։*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և/ կամ արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը: Պայմանագիրը կատարել սույն պայմանագրի

հավելված N 1.1 ով հաստատված աշխատակիցների և հայաստանյան ծագում ունեցող ապրանքների մատակարարման միջոցով:

2.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3661616.84 (երեք միլիոն վեց հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր տասնվեց դրամ ութսունչորս լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև ________ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

3.4 Սույն պայմանագրի 2.4.11 և 2.4.12 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով վաճառողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ______ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին՝ հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ
Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.
ՀՎՀՀ 07300626
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
Վանաձորի մ/ճ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ դեղատուն» ՍՊԸ
ք. Երևան, Օհանով 15/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ1570023994240200 ՀՎՀՀ 00154799
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

---

[25] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

հ/հ 247170009424

Տնօրեն՝ ------------------Մ. Ա. Սիմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

/ստորագրություն/

Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 28 » 12 20 21 թ. կնքված*
*«ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-22/1»-2 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գին/ՀՀ դրամ | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը *** |
| 2 | 33621390 | Արիտմիլ դ/հ 200մգ №20 | Արիտմիլ Էս Այ Սի "Բորշչագովյան քիմիադեղագործա-կան գործարան" ՀԲԸ | ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) դեղահատեր 200մգ №20 բլիստերում Դեղահատ 200մգ, <<վախենում է խոնավությունից>> | հատ | 39 | 54600 | 1400 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 1400 | *2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* |
| 6 | 33661121 | Կարդիո-ԱՍ դ/հ 100մգ №20 | Կարդիո-ԱՍ ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ | Ացետիլսալիցիլաթթու 100 մգ Դեղահատ աղելույծ 100մգ ապակե 22իկում <<վախենում է խոնավությունից>> | հատ | 27,48 | 164880 | 6000 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 6000 | *2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* |
| 11 | 33671125 | Ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) 30մգ | Ամբրոքսոլ «Լեկխիմ-Խարկով» Մասնավոր Բաժնետիրակ | Դեղահատ 30մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 13,5 | 20250 | 1500 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղո | 1500 | *2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող* |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ան Ընկերություն | | | | | | վ հեռավորության վրա դեղատուն | | համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 14 | 33651125 | Ազիթրոմիցին 250մգ դեղապատիճ | Ազիթրոմից ին «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» | Ազիթրոմիցին դեղապատիճ 250մգ | հատ | 222 | 22200 | 100 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 100 | *2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* |
| 16 | 33651112 | Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) դեղահատեր թաղանթապատ 875մգ+125մգ | Ամոքսիցիլին Ռուսան | դեղահատեր թաղանթապատ 875մգ+125մգ «վախենում է խոնավությունից» | հատ | 39,7 | 16674 | 420 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 420 | *2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* |
| 18 | 33621720 | Բիսոպրոլոլ 5 մգ | Բիպրոլ Հեմոֆարմ ՍՊԸ | Դեղահատ 5մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 15,75 | 551250 | 35000 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 35000 | *2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* |
| 20 | 33621360 | Գլիցերիլ եռնիտրատ(նիտրոգլիցերին) 0.5 մգ | Նիտրոգլիցերին Տեխնոլոգ ՄԲԸ, Մանուիլսկոգո փ. 8, | Դեղահատ 0,5մգ<<վախենում է խոնավությունից>> | հատ | 8,76 | 12264 | 1400 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղո | 1400 | *2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող* |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 20300 Ոսման, Չերկասսի շրջան | | | | | | վ հեռավորության վրա դեղատուն | | համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 27 | 33691212 | Տուրբո Միկրոն Ջի դ/հ №60 | Տուրբո միկրոն Ջի ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, ՊՍՊ գրուպ 65, Քվեմո Ֆոնիչալա փ., Թբիլիսի, Վրաստան | Դիոսմին+հեսպերիդին 450մգ+50մգ թաղանթապատ Դեղահատեր թաղանթապատ 450մգ+50մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 85 | 35700 | 420 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 420 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 28 | 33611170 | Դրոտավերինի հիդրոքլորիդ դ/հ 40մգ №20 | Դրոտավերին "Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ)drotaverine (drotaverine hydrochloride) դեղահատեր40մգ,բլիստերում (20/2x10/ | Դրոտավերինի հիդրոքլորիդ դ/հ 40մգ Դեղահաբ 40մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 12,38 | 29712 | 2400 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 2400 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 29 | 33611170 | Նո-Շպա Ֆորտե դ/հ 80մգ №24 | Նո-Շպա Ֆորտե Խինոին Դեղագործական և Քիմիական Գործարան Փրայվիտ Քո. ՍՊԸ, 2112 Վերեսեգհիազ, Լևայի ու. 5 | Դրոտավերին 80 մգ Դեղահաբ 80մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 52,88 | 27920,64 | 528 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 528 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 32 | 33621760 | Էնալապրիլ դ/հ 20մգ №20 | Էնալապրիլ Հեմոֆարմ | Էնալապրիլի | հատ | 22,3 | 423700 | 19000 | Ք. Վանաձոր, | 19000 | 2022թ. ֆինանսական միջոցներ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՍՊԸ, 249030, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե մայրուղի 62 | մալեատ 20 մգ Դեղահատ 20մգ <<վախենում է խոնավությունից>> | | | | | Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | | նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 33 | 33621520 | Էնապ-ՀԼ, դ/հ 10մգ/12,5մգ №20 | Էնապ-ՀԼ ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո | Էնալապրիլ+հիդրոքլորոթիազիդ 10+12.5 մգ Դեղահատ 10մգ+12,5մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 58,88 | 353280 | 6000 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 6000 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 34 | 33621760 | Էնալապրիլի մալեատ 10 մգ | Էնալապրիլ «Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ, 64/27, Չապաեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան | Դեղահատ 10մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 5,9 | 41300 | 7000 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 7000 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 36 | 33631290 | Իբուպրոֆեն 400 մգ | Իբուպրոֆեն Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ` բաց թողնման հսկող, Հեմոֆարմ դ.օ.օ., 78000, Բանյա-Լուկա, Նովակովիչի բբ, Բոսնիա և Հերցեգովինա` | Իբուպրոֆեն 400 մգ Դեղահատ 400մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 22 | 176000 | 8000 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 8000 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դեղաձևն | | | | | | | | |
| 38 | 33621600 | Ինդապամիդ թ/պ դ/h 1.5 մգ | Ինդապամիդ Հեմոֆարմ | Ինդապամիդ թ/պ դ/h 1.5 մգ Դեղահատ 1,5մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 26 | 140400 | 5400 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 5400 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 41 | 33642230 | Լևոթիրօքսին 50 մկգ | Էութիրոքս Մերկ ԿԳաԱ, Ֆրանկֆուրտեր Շտրասե 250, 64 293 Դարմշտադտ | Դեղահատ 50մկգ «վախենում է խոնավությունից» | հատ | 10,5 | 7350 | 700 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 700 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 42 | 33691203 | Լոզարտան 100 մգ | Լորիստա ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարյեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Դեղահատ 100մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 59 | 106200 | 1800 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 1800 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 45 | 33611360 | Ակվավիտ-D3 ջրային լուծույթ 10մլ | «Տեխնոլոգ» ՀԲԸ, Մանուիլսկոգո փ. 8, 20300 Ուման, Չե | Խոլեկալցիֆերոլ 15000ՄՄ/մլ Կաթիլներ ներքին ընդունման 15000ՄՄ/մլ <<կոտրվող է>> | հատ | 898 | 359200 | 400 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 400 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 49 | 33621690 | Կարվեդիլոլ 25 մգ | Կարվիդիլ Գրինդեկս ԲԸ, Կրուստպիլս փ. 53, ԼՎ-1057, Ռիգա | Դեղահատ 25մգ «վախենում է խոնավությունից» | հատ | 38 | 91200 | 2400 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 2400 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 52 | 33621140 | Զիլտ թ/պ դ/հ 75մգ №14 | ԿՌԿԱ-ՖԱՐՄԱ ՍՊԸ, ԴՊՑ Յաստրեբարսկո, Ցվետկովիչի ԲԲ | Կլոպիդոգրել 75 մգ Դեղահատ 75մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 89 | 356000 | 4000 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 4000 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 58 | 33661122 | Պարացետամոլ 500մգ | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան | Դեղահատ 500մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 6,24 | 24960 | 4000 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 4000 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 61 | 33621530 | Կո-Պրենեսա դ/հ 4մգ/1,25մգ №30 | Կո-Պրենեսա ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Պերինդոպրիլ 4մգ + Ինդապամիդ 1,25մգ դ/հաբ Դեղահատ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 68,45 | 123210 | 1800 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 1800 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 62 | 33621460 | Պրեստանս դ/հ 5մգ/5մգ №30 | Պրեստանս ԿՌԿԱ դ.դ., | Պերինդոպրիլ 5մգ | հատ | 158 | 94800 | 600 | ք. Վանաձոր | 600 | 2022թ. ֆինանսակա |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Նոր մեստ, Սմարժեկա փ. 6, 8501 Նոր Մեստո | + Ամլոդիպին 5մգ դ/հաբ Դեղահատ <<վախենում է խոնավությունից>> | | | | | ք. Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | | ն միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 65 | 33671113 | Սալբուտամոլ ցողացիր 100 մկգ/ 200 դոզ. | Բինոֆարմ ԲԸ, 3, 2-1, Կոնստրուկտորա Գուսկովա փ., Զելենոգրադ, Մոսկվա, 124460, Ռուսաստան | Ցողացիր շնչառման100մկգ/դեղաչափ, 200 դեղաչափ ալյումինե տարայում, դեղաչափիչ մխոցով | հատ | 1080 | 151200 | 140 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 140 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 67 | 33651131 | Սուլֆապրիմ օշարակ 100մ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանային 22 | Սուլֆամեթոքսազոլ+ տրիմեթոպրիմ 40մգ/մլ+8մգ/մլ 100 մլ 100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ դեղակախույթ ներքին ընդունման | հատ | 1420 | 85200 | 60 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 60 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 68 | 33621620 | Սպիրոլն 25մգ դ/հ №50 | Ռեմեդիկա ՍՊԸ, Լիմասոլ Ինդուստրիալ Էստեյտ, Ահարնոն փ., 3056 Լիմասոլ | Սպիրոնոլակտոն 25 մգ Դեղահատեր թաղանթապատ 25մգ <<վախենում է խոնավությունից>> | հատ | 36,55 | 164475 | 4500 | ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 4500 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 70 | 33621730 | Վերապամիլ դ/հ 80մգ №30 | Ալկալոիդ ԱԴ-Սկոպյե | Դեղահատեր թաղանթապատ 80մգ <<վախենում է | հատ | 17,5 | 10500 | 600 | ք. Վանաձոր, Բաթումի | 600 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվել |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | խոնավությունից>> | | | | | 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | | լու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |
| 74 | 33651134 | Ցիպրոֆլօքսացին ակնակաթիլ 3մգ/մլ, 5մլ | Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., Իլֆով, 075100 Օտոպենի, Էրոիլոր փ., Ն.1Ա | Ակնակաթիլ 3մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ «պախենում է ջերմությունից» | հատ | 429,78 | 17191,2 | 40 | Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն | 40 | 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվ.-ի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 7-րդ կետի՝ դեղի պիտանիության ժամկետները զնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝ ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը, գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:
Բոլոր հղումների դեպքում հասկանալ <<կամ համարժեք >> արտահայտությունը:

. Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման սահմանվում է սպասարկման տարածքում գործող՝ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը, իսկ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատան բացակայության հիմքով գնման ընթացակարգը չկայանալու դեպքում հայտարարվում է նոր գնման ընթացակարգ՝ սահմանելով սպասարկման տարածքում գործող՝ մինչև 15 կմ շառավղով հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը:

Գնման ընթացակարգի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որակավորումը հիմնավորող փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող դեղատան մասին տեղեկատվություն (անվանումը, գտնվելու հասցեն, եթե առաջարկվող դեղատունը չի հանդիսանում հաղթող ճանաչված մասնակցի դեղատան մասնաճյուղ, ապա ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիր): Տեղեկատվության հիման վրա գնահատվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը: ԱԱՊ և հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքված պայմանագրում նշվում է դեղատան վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում: Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը::Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ<br>Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.<br>ՀՎՀՀ 07300626<br>Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ<br>Վանաձորի մ/ճ<br>հ/հ 247170009424<br>Տնօրեն՝ ---------------Մ. Ա. Սիմոնյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «Նատալի Ֆարմ դեղատուն» ՍՊԸ<br>ք. Երևան, Օհանով 15/1<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ1570023994240200 ՀՎՀՀ 00154799<br>Տնօրեն՝ Ա.Ասատրյան<br>________________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված N 2
« 28 » 12 20 21 թ. կնքված
«ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-22/1»-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ |

| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ | «Նատալի Ֆարմ դեղատուն» ՍՊԸ |
| Ք. Վանաձոր, Բաթումի 13փ. | ք. Երևան, Օհանով 15/1 |
| ՀՎՀՀ 07300626 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ Վանաձորի մ/ճ | Հ/Հ1570023994240200 ՀՎՀՀ 00154799 |
| հ/հ 247170009424 | Տնօրեն՝ Ա.Աստրյան |
| Տնօրեն ----------------Մ. Ա. Սիմոնյան | ________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |